ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

այաստանի Հանրապետության Արարատի մարզի Ար ևաբույր համայնք
Հ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, (0-60) 65-22-80, arevabuyr.Ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29. ՆՈՅԵՄԲԵՐ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 22

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 22 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ պարբերության պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արևաբույր համայնքի 2017թվականի նոյեմբերի 29- ի հերթական նիստի օրակարգը.

1 Հաստատել Արևաբույր համայնքի 2018թ-ի տեղական տուրքերի և դրույքաչափերի վճարները:
2.Վարչական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Քվեարկության արդյունքները՝ Կողմ- 3 Դեմ- 0 Չեռնպահ -0

Ավագանու անդամներ՝

1.Ասլանյան Նարեկ / կողմ /
2.Մարգարյան Արա / կողմ /
3.Բաղդասարյան Հայկ / կողմ /
4.Գրիգորյան Արշավիր / բացակա /
5.Մանուկյան Ջիվան / բացակա /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐՏԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, (0-60) 65-22-80, arevabuyr.Ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29.ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ N 23 Ն

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական տուրքերի և վճարների մասին մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սահմանել Արևաբույր համայնքի 2018թ-ի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի թույլտվության համար:

Հիմնական շենքերի և շինությունների համար

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ,

բբ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,
բգ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ,
բդ) 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 դրամ.
ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:
1.1 Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերկանգնման ուժեղացման արդիականացման և բարեկարգման համար աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.
բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:
դ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի)թույլտվության համար՝ 5000 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 200 000 դրամ:
2.1 Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 60 000 դրամ:
3. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 50 000 դրամ:
4. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համր
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.000դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 60.000դրամ:

5. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացոթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

6. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 500 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150 000 դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոնների համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

գ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

8. Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 375 դրամ:

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչաան տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքը 150 դրամ:

9. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ 100000 դրամ:

10. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 դրամ.

11. Համայնքի վարչական տարածքում բաղաբացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 500000 դրամ:

12 Սահմանել Արևաբույր համայնքի 2018թվականի տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը

12.1 Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխել վերակառուցման աշխատանքներ կատարելու համար տեխնիկտնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների համար փոխահատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ

12.2Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջվող բոլոր շինարարական աշխատանքները իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերառակոուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումը ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտի փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ

12.3Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներ ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայության դիմաց փոխատուցման վճար սահմանել 5000 դրամ:

13. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համանքի մատուցած ծառայությունների դիմաց փոխահատուցման վճար սահմանել՝ 10000 դրամ:

14 Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխահատուցման վճար սահմանել՝ 3000 դրամ:

15. Համայնքում աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչից գանձել՝

ա/ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչից 100 դրամ:

բ/ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղափոխման համար ըստ ծավալի 1խմ.500 դրամ:

16. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար սահմանել՝ 0 դրամ:

17. Սույն որոշման 1-ին և 8-րդ կետերով սահմանված դրույքաչափերի համար կիրառել 0.5 գործակիցը:

Ավագանին որոշեց հաստատել

Քվեարկության արդյունքները՝ Կողմ- 3 Դեմ- 0 Չեռնպահ - 0

Ավագանու անդամներ՝

1.Ապանյան Նարեկ /կողմ /

2.Մարգարյան Արա / կողմ /

3.Բաղդասարյան Հայկ / կողմ /

4.Գրիգորյան Արշավիր / բացակա /

5.Մանուկյան Ջիվան / բացակա/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևաբույր համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևաբույր, (0-60) 65-22-80, arevabuyr.Ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 24 Ն

ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Վարչական բյուջեի եկամտային մասից գույքահարկ փոխադրամիջոցներից պակասեցնել 1500.0 հազար ՀՀ դրամ:
2) Վարչական բյուջեի պահուստային միջոցների 11.1.2 խմբի 4891 հոդվածից պակասեցնել 1500.0 հազար ՀՀ դրամ:
3) Վարչական բյուջեի 11.1.2 խմբի 4891 հոդվածից պակասեցնել 896.0 հազար դրամ և ավելացնել վարչական բյուջեի 01.1.1 օրենսդիր և գործադիր մարմին խմբի 4112 պարգևատրում հոդվածին 896.0 հազար ՀՀ դրամ:

Քվեարկության արդյունքները՝ Կողմ- 3 Դեմ- 0 Չեզոնպահ -0

Ավագանու անդամներ՝

1.Ասլանյան Նարեկ / կողմ /
2.Մարգարյան Արա / կողմ /
3.Բաղդասարյան Հայկ / կողմ /
4.Գրիգորյան Արշավիր / բացակա /
5.Մանուկյան Ջիվան / բացակա /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐՏԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ